ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 194 Ա
03/08/2010թ.

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝

ո ր ո շ ու մ ե մ՝

1. հաստատել ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կանոնների գրանցման կարգը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
--/--/2010թ թիվ --Ա որոշմամբ

ԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո) կողմից իր կանոնները, դրանց գործողության դադարեցումը և դրանցում լրացումները և փոփոխությունները (այսուհետ՝ կանոններ) գրանցելու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների կազմը և դրանց ներկայացման կարգը:

ԳԼՈՒԽ 2
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

2. Բյուրոն իր կանոնները գրանցելու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

1) կանոնները գրանցելու մասին միջնորդագիր՝ ստորագրված Բյուրոյի՝ կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ և վավերացված Բյուրոյի կնիքով.

2) Բյուրոյի կառավարման համապատասխան մարմնի որոշումը կամ նիստի արձանագրությունից քաղվածք՝ գրանցման ներկայացված կանոններն ընդունելու վերաբերյալ.

3) գրանցման ներկայացվող կանոնները՝ առնվազն 3 օրինակից: Բյուրոյի կանոնների փոփոխությունները և (կամ) լրացումները գրանցման ներկայացվելու դեպքում փոփոխությունները և (կամ) լրացումները ներկայացվում են 1 օրինակից, իսկ դրանք ներառող (ինկորպորացրած) ամբողջական կանոնները՝ առնվազն 3 օրինակից.

4) Բյուրոյի կանոնների փոփոխությունները և (կամ) լրացումները կամ գործողության դադարեցումը գրանցման ներկայացվելու դեպքում՝ Կենտրոնական բանկի կողմից նախկինում գրանցված կանոնների՝ Բյուրոյի մոտ առկա բոլոր օրինակները: Ընդ որում, ներկայացված փոփոխությունները և (կամ) լրացումները Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու դեպքում նախկինում գրանցված կանոնները վերադարձվում են Բյուրոյին՝ չգործելու վերաբերյալ հատուկ նշագրումով.

5) կանոնների ընդունման հիմնավորումը՝ ստորագրված Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից.

6) Բյուրոյի պատասխանատու ակտուարի եզրակացությունը՝

ա) Բյուրոյի (ներառյալ՝ Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին կատարվող) ծախսերի ավելացման կամ եկամուտների նվազեցման վրա կանոնների ազդեցության վերաբերյալ,

բ) հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն և (կամ) նվազագույն սահմանաչափերի, ռիսկայնության գործակիցների թույլատրելի արժեքների, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հավելվածի 3.4-րդ կետով նախատեսված այլ ռիսկայնության գործոնների ընդգրկման վերաբերյալ՝ վերջինների գրանցման միջնորդագիր ներկայացնելու դեպքում.

7) կանոնների նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ կազմված ամփոփաթերթը, իսկ առաջարկություններ ներկայացված չլինելու դեպքում՝ տեղեկանք՝ առաջարկությունների բացակայության վերաբերյալ՝ ստորագրված Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված ամփոփաթերթը առնվազն պարունակում է այն միջոցը, որով ստացվել է առաջարկությունը, առաջարկության բովանդակությունը և կանոնների այն կետը, որտեղ արտացոլվել է առաջարկությունը, իսկ առաջարկը չընդունվելու դեպքում՝ այն չընդունելու հիմնավորումը.

8) (ուժը կորցրել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12.10.2010 թվականի թիվ 253 Ա որոշմամբ)

3. Կենտրոնական բանկը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են սույն կարգի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունը գնահատելու համար:

ԳԼՈՒԽ 3
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Կանոնները գրանցման են ներկայացվում դրանք Բյուրոյի համապատասխան կառավարման մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Այն կանոնները, որոնց ընդունումը պայմանավորված է մեկ այլ կանոնների ընդունմամբ, Կենտրոնական բանկ գրանցման են ներկայացվում մեկ փաթեթով:

6. Գրանցման ներկայացվող կանոնները (փոփոխությունները և (կամ) լրացումները ներառող (ինկորպորացրած) ամբողջական կանոնները) պետք է ունենան Հավելված 1-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ, թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված, իսկ կանոնների վերջին թերթի հետնամասում՝ կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն Հավելված 2-ի: Թերթերի համարակալման ժամանակ տիտղոսաթերթը հաշվարկվում է էջերի քանակի մեջ, սակայն չի համարակալվում: Կանոնադրություն չհանդիսացող կանոնների տիտղոսաթերթում նշվում է այդ կանոնների անվանումը:

7. Սույն կարգի 2-րդ գլխով նախատեսված փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային ձևով՝ առձեռն մուտքագրելով կամ փոստի միջոցով՝ պատվիրված նամակով:

8. Կանոնները համարվում են գրանցման համար Կենտրոնական բանկ ներկայացված, սույն կարգի 2-րդ գլխով նախատեսված բոլոր փաստաթղթերը սահմանված ձևով Կենտրոնական բանկ մուտքագրվելու պահից:

9. Եթե Կենտրոնական բանկ ներկայացված միջնորդագրին կից չեն ներկայացվել սույն կարգի 2-րդ գլխով նախատեսված բոլոր փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները և (կամ) դրանցում առկա են տեխնիկական բնույթի թերություններ կամ ակնհայտ սխալներ, անճշտություններ կամ անհամապատասխանություններ, ապա Կենտրոնական բանկը 5 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Բյուրոյին: Սույն կետով սահմանված կարգով ծանուցվելու դեպքում Բյուրոն 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և

(կամ) տեղեկությունները և (կամ) վերացնում է դրանցում առկա թերությունները, սխալները, անճշտությունները կամ անհամապատասխանությունները: Այդ դեպքում միջնորդագիրը ներկայացված է համարվում բոլոր պատշաճ փաստաթղթերը սույն կարգի 8-րդ կետով սահմանված կարգով Կենտրոնական բանկ մուտքագրվելու օրվանից:

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
--/--/2010թ թիվ --Ա որոշմամբ
հաստատված Հավելվածի

ԲՅՈՒՐՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՁԵՎ

Տպագրված է -- օրինակից

Օրինակ --

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի (խորհրդի)
--/--/ ----թ թիվ -------- Լ որոշմամբ

Փոփոխված է --/--/---- թիվ --
--/--/---- թիվ --
--/--/---- թիվ --
--/--/---- թիվ --
որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում
«--» ---------- ----թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՈՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - ----

Հավելված 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
--/--/2010թ թիվ --Ա որոշմամբ
հաստատված Հավելվածի

ԲՅՈՒՐՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԹԵՐԹԻՆ ՓԱԿՑՎՈՂ ՊԻՏԱԿԻ ՁԵՎ

Համարակալված, կնքված և կարված է

---------- (----------) թերթ:

ԻՎ Լիցենզավորման ու գրանցման բաժնի պետ՝

--- ---

անուն, ազգանուն *ստորագրություն*

վերահսկող՝

--- ---

անուն, ազգանուն *ստորագրություն*